ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունվարի 2026 թվականի N 22-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի N 14-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի «Ինքնակամ կառույցների հաշվառման կարգը սահմանելու մասին» N 14-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով՝

«2.1. Ինքնակամ կառույցների վերաբերյալ տեղեկությունները և փաստաթղթերը հաշվառելու նպատակով՝ սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով ներկայացվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված ժամկետում, որոնց հաշվառումը Կադաստրի կոմիտեի կողմից հաստատվում կամ մերժվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ժամկետներում:»:

2. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի՝

1) 1-ին կետի 2-րդ ենթակետում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի» բառերը փոխարինել «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 16-րդ և 17-րդ մասերով սահմանված գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության և քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեության» բառերով.

2) 1-ին կետի 5-րդ ենթակետում «www.e-cadastre.am կայքէջում» բառերը փոխարինել «անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգում» բառերով.

3) 3-րդ կետում «Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 8-ի N 75-Ն հրամանի» բառերը փոխարինել «ՀՀ կառավարության 2025 թվականի հուլիսի 24-ի N 1028-Ն որոշման» բառերով.

4) 4-րդ կետը «լուսանկար» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված անհրաժեշտ այլ փաստաթղթեր» բառերով.

5) 8-րդ կետը «(sms)» բառից հետո լրացնել «, իսկ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված դեպքերում ինքնակամ կառույցը հաշվառվում է սույն կարգի 8.1-ին կետով սահմանված կարգով» բառերով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին և 8.2-րդ կետերով՝

«8.1. Չափագրողի կողմից 2021 թվականի օրթոֆոտոհատակագծերում (օրթոֆոտոլուսանկարներում) արտացոլված (իսկ պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) դեպքում անկախ 2021 թվականի օրթոֆոտոհա-

տակագծերում (օրթոֆոտոլուսանկարներում) արտացոլված լինելու հանգամանքի) ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) վերաբերյալ հաշվառման փաթեթն առցանց չափագրման գրասենյակ ներբեռնելուց և Կադաստրի կոմիտե ներկայացնելուց հետո ձևավորվում է չափագրման ծածկագիր, և պատվիրատուն դրա վերաբերյալ տեղեկացվում է կարճ հաղորդագրության միջոցով (sms), որը հավաստում է հաշվառման փաթեթը Կադաստրի կոմիտե ներկայացված լինելու հանգամանքը: Ներկայացված հաշվառման փաթեթն ուսումնասիրվում է Կադաստրի կոմիտեի կողմից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ժամկետներում: Սույն կետով նախատեսված ուսումնասիրությունն իրականացվում է չափագրողի կողմից կազմված տվյալները օրթոֆոտոհատակագծերի (օրթոֆոտոլուսանկարների) հետ համեմատելով և փաստաթղթերի ամբողջականությունը ստուգելով, որի արդյունքում Կադաստրի կոմիտեն հաստատում կամ մերժում է ինքնակամ կառույցի հաշվառումը: Ինքնակամ կառույցի հաշվառումը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ պատվիրատուն տեղեկացվում է կարճ հաղորդագրության միջոցով (sms):

8.2. Այն ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների), որոնք Կադաստրի կոմիտե հաշվառման են ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված ժամկետների խախտմամբ, սակայն գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանում կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում արտացոլված են, հաշվառված լինելու վերաբերյալ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրվում է համապատասխան տեղեկանք՝ դիմումի ներկայացման պարագայում: Սույն կետում նշված դեպքում տեղեկանք տրամադրելու համար Կադաստրի կոմիտեն ուսումնասիրում է 2021 թվականի օրթոֆոտոհատակագծերը (օրթոֆոտոլուսանկարները) և իր կողմից ստեղծված, հավաքագրված, այդ թվում՝ գրանցման համար ներկայացված տվյալները: Տեղեկանքի տրամադրումը մերժվում է, եթե ներկայացված հաշվառման փաթեթը չի համապատասխանում «Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված պահանջներին:».

7) 10-րդ կետը «1-4-րդ կետերում» բառերից հետո լրացնել «և 3.1-ին մասով» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 20-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ